Համարը N 486-Լ	Տեսակը Ինկորպորացիա
Տիպը Որոշում	Կարգավիճակը Գործում է
Սկզբնաղբյուրը Հրապարակվել է կայքում 04.05.2019	Ընդունման վայրը Երևան
Ընդունող մարմինը ՀՀ վարչապետ	Ընդունման ամսաթիվը 03.05.2019
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ	Ստորագրման ամսաթիվը 03.05.2019
Վավերացնող մարմինը	Վավերացման ամսաթիվը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 05.05.2019	Ուժը կորցնելու ամսաթիվը

Կապեր այլ փաստաթղթերի հետ

23.03.2018 ՀՕ-253-Ն ՀՀ ՕՐԵՆՔԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

25.05.2018 N 564-Լ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ...

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

Մայր փաստաթուղթ:Վրչպ,03.05.2019,N 486-Լ

Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը՝	Համապատասխան ինկորպորացիան՝
Վրչպ,30.10.2019,N 1570-Լ	Վրչպ,03.05.2019,N 486-Լ
Վրչպ,04.05.2020,N 530-Լ	Վրչպ,03.05.2019,N 486-Լ
Վրչպ,22.02.2022,N 204-Լ	Վրչպ,03.05.2019,N 486-Լ
Վրչպ,17.05.2022,N 520-Լ	Վրչպ,03.05.2019,N 486-Լ
Վրչպ,29.12.2023,N 1297-Լ	Վրչպ,03.05.2019,N 486-Լ
Վրչպ,13.05.2024,N 443-Լ	Վրչպ,03.05.2019,N 486-Լ
Վրչպ,17.06.2024,N 572-Լ	Վրչպ,03.05.2019,N 486-Լ
Վրչպ,20.02.2025,N 143-Լ	Վրչպ,03.05.2019,N 486-Լ
Վրչպ,08.04.2025,N 282-Լ	Վրչպ,03.05.2019,N 486-Լ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մայիսի 2019 թվականի N 486-Լ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի «Վարչապետի աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 564-Լ որոշման 1-ին հավելվածի 20-րդ կետի 5-րդ ենթակետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների իրավունքների իրացմանը, ազգային ինքնության պահպանմանն ու մշակույթի զարգացմանը նպաստելու նպատակով՝

1. Ստեղծել Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ) և հաստատել դրա կազմը՝ համաձայն հավելվածի:

(1-ին կետը փոփ. 17.05.22 N 520-Լ)

2. Խորհուրդը խորհրդակցական մարմին է և իր գործունեությունն իրականացնում է համաձայն իր կողմից հաստատված աշխատակարգի: Խորհրդի կազմը նշանակվում է երկու տարի ժամկետով:

(2-րդ կետը լրաց. 17.05.22 N 520-Լ, խմբ. 29.12.23 N 1297-Լ)

3. Խորհուրդը կազմված է պետական կառավարման համակարգի մարմինները ներկայացնող անդամներից և Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնության իրավունքների իրացման, ազգային ինքնության պահպանման ու մշակույթի զարգացման ուղղությամբ գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ հասարակական կազմակերպություն) անդամներից:

Խորհրդի կազմում անդամի թեկնածու (այսուհետ՝ թեկնածու) ներկայացնելու իրավունք ունի առնվազն հինգ տարվա պետական գրանցում ունեցող և տվյալ ազգային փոքրամասնությունը ներկայացնող հասարակական կազմակերպությունը:

Յուրաքանչյուր ազգային փոքրամասնություն խորհրդի կազմում կարող է ունենալ ոչ ավելի քան երկու անդամ:

Եթե որևէ ազգային փոքրամասնություն ներկայացնող հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված թեկնածուների ընդհանուր թիվը երկուսից ավելի է, ապա սահմանված երկու անդամների ընտրությունը կատարում է խորհրդի նախագահը:

Հասարակական կազմակերպությունները թեկնածուներ են առաջադրում գործող խորհրդի լիազորությունների ավարտից երկու ամիս առաջ:

Գործող խորհրդի լիազորությունների ավարտից երեք ամիս առաջ խորհրդի նոր կազմի ձևավորման մասին հայտարարություն է տրվում Հայաստանի Հանրապետության կառավարության կայքում (gov.am)՝ «Հայտարարություններ» բաժնում.

(3-րդ կետը փոփ., լրաց. 17.05.22 N 520-Լ, խմբ. 29.12.23 N 1297-Լ, փոփ. 13.05.24 N 443-Լ)

4. Խորհուրդը քննարկում է Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ոլորտին առնչվող հիմնախնդիրները, արտահայտում իր դիրքորոշումը դրանց վերաբերյալ, ինչպես նաև մշակում համապատասխան առաջարկություններ, այդ թվում՝ նաև ազգային փոքրամասնություններին հատկացվող պետական աջակցությունը բաշխելու հարցի վերաբերյալ:

5. Խորհրդի նիստերին կարող են մասնակցել ազգային փոքրամասնությունների շահերը ներկայացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև խորհրդի նախագահի կողմից հրավիրված այլ անձինք:

6. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների առնվազն կեսից ավելին:

(6-րդ կետը փոփ 29.12.23 N 1297-Լ)

7. Խորհրդում աշխատակարգային որոշումները կայացվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

8. Խորհրդի աշխատակարգը հաստատում է խորհուրդը:

9. Խորհրդի նախագահին՝ երկշաբաթյա ժամկետում հրավիրել խորհրդի նիստ՝ օրակարգում ներառելով խորհրդի աշխատակարգի հաստատումը և ազգային փոքրամասնություններին հատկացվող պետական աջակցությունը բաշխելու հարցի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

2019 թ. մայիսի 3
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2019 թվականի
մայիսի 3-ի N 486-Լ որոշման

Կ Ա Զ Մ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ

Արայիկ Հարությունյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար (խորհրդի նախագահ՝ ի պաշտոնե)
Արտաշես Թումանյան	ՀՀ վարչապետի խորհրդական (խորհրդի նախագահի տեղակալ՝ ի պաշտոնե)
Դանիել Դանիելյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (ի պաշտոնե)
Վարդան Կոստանյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ի պաշտոնե)
Աննա Կարապետյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (ի պաշտոնե)
Ռոբերտ Աբիսողոմոնյան	ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ (ի պաշտոնե)
Վարդան Ասցատրյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ (ի պաշտոնե)
Նարինե Գուլյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի գլխավոր մասնագետ (խորհրդի քարտուղար՝ ի պաշտոնե)
Արսեն Միխայլով	«Հայաստանի «Աթուռ» ասորական ասոցիացիա» ՀԿ (համաձայնությամբ)

Իրինա Գասպարյան	«Հայաստանի ասորական «Խայադթա» Ֆեդերացիա» ՀԿ (համաձայնությամբ)
Մարի Սիմոնյան Իրինա Պողոսյան	Հայաստանի «Երևանի բելառուսների համայնքի «Բելառուս» ՀԿ (համաձայնությամբ)
Վիկտոր Վուխրեր Մարտին Մինասյան	«Ցևտոնիա» գերմանացիների մշակութային ՀԿ (համաձայնությամբ)
Խդր Հաջոյան	«Եզդիների ազգային միություն» ՀԿ (համաձայնությամբ)
Սաիդ Ավդալյան	«Երիտասարդ եզդիներ» ՀԿ (համաձայնությամբ)
Լիանա Հարությունյան Իրինա Կոնցևիչ	Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական ՀԿ (համաձայնությամբ)
Մարիա Լազարևա	«Հայաստանի հունական համայնքների միություն» ՀԿ (համաձայնությամբ)
Էդուարդ Միխաիլով	Երևանի «Պոնտի» հունական ՀԿ (համաձայնությամբ)
Ռիմա Վարժապետյան	«Հայաստանի հրեական համայնք» ՀԿ (համաձայնությամբ)
Վիլլի Վայներ	«Մենորա» հրեական մշակույթի կենտրոն» ՀԿ (համաձայնությամբ)
Ելենա Հակոբյան	Հայաստանի Հանրապետության «Ռոսիա» ՀԿ (համաձայնությամբ)
Աիդա Հարությունյան	Ռուսական մշակույթի միջազգային կենտրոն «Հարմոնիա» ՀԿ (համաձայնությամբ)
Սվետլանա Նամչևաձե Նինո Սպանդերաշվիլի	«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական ՀԿ (համաձայնությամբ)
Աննա Հարությունյան Ալլա Մինասյան	«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ (համաձայնությամբ)
Կնյազ Հասանով	«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ (համաձայնությամբ)
Սլո Դրբոյան	«Քուրդիստան կոմիտե» ՀԿ (համաձայնությամբ)

(հավելվածը փոփ. 30.10.19 N 1570-Լ, 04.05.20 N 530-Լ, 22.02.22 N 204-Լ, 17.05.22 N 520-Լ, խմբ. 29.12.23 N 1297-Լ, փոփ. 13.05.24 N 443-Լ, լրաց. 17.06.2024 N 572-Լ, փոփ. 20.02.25 N 143-Լ, 08.04.25 N 282-Լ)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**